

371.3
Հ-11

Հ. Ս. Խ. Հ. ԼՈՒԺՈՂԿՈՄԱՏ
ՍՈՅԵԱԼԱԿԱՆ ԴԱՍՏԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԳԼԻՎԱԿՈՐ ԿԱՐՁՈՒԹՅՈՒՆ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԲԱԺԻՆ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՆԱՄԱԿ ԳԱՐԱԱՍՑԻՆ ԱՅԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ Ա. ՆԱՄԱԿ

Մեթոդական տեսուչ՝ Վ. Ասվածարյան

Պետական Համարակայություն. 8երես—1928

30 SEP 2019

48 292

371.3

Հ-11

ՎՃ

2802-101

Հ. Ս. Խ. Զ. ԼՈՒԺՈՂԿՈՄԱՏ
ՍՈՑԻԱԼԻԿԱՆ ԴԱՍՏԵՐԱԿՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԲԱԺԻՆ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՆԱՄԱԿ

ԳԱՐԱԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ա. ՆԱՄԱԿ

Մերողական տեսուչ՝ գ. Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա.



Գետական Հրատարակչություն. Յերեվան - 1928

ԳՅՈՒՂՅԵՐԻՏ ԴՊՐՈՑԻ Ա. ԽՄԲԻ

«Գարնանային աշխատանիները յեվ նրանց
համար նախապատճառակիլը» խորագրով կոմ-
պլեքսի մշակումը

Գյուղերիս դպրոցների աշխատանքների թե-
մաների յուրահատկությունն եւ չսահմանափակ-
վել միայն կոմպլեքսներով, այլ կապել անցածը
գյուղի արտադրական և հասարակական աշխա-
տանքների հետ, այսպիսի մեթոդներ գործադրել,
վոր աշակերտները գիտությունը յուրացնեն, գի-
տության որենքները գուրս բերեն փորձերից և
շրջապատի կանքի աշխատանքների անմիջական
մասնակցությունից։ Այս դեպքում նյութը բա-
ժանվում է հետեւալ բաժինների՝ 1) աշխատան-
քի պլանավորում, 2) շրջապատի ուսումնասիրու-
թյուն, 3) գործնական աշխատանքներ, 4) գործ-
նական աշխատանքների տեսական հիմնավորում,
5) կատարած աշխատանքների հաշվառում, 6) ձեռք
բերած գիտության մասսայականացում։

Այս ձեզ գործադրելով՝ գյուղերիտ դպրոց-
ներն իրենց նյութը բաշխում են ըստ սեզոննե-
րի՝ ձմեռը մեծ տեղ տալով տեսականին, իսկ

գարնանը և մանավանդ ամառը՝ գործնականին,
այնպես վոր ձմեռվա և գարնան զասատախտակի
մեջ կարելի յէ վորոշ փոփոխություն մտցնել և
հսարավորություն տալ գործնական աշխատանք-
ներ կատարելու թե դպրոցում և թե դպրոցից
դուրս:

Ուսուցման առաջին տարվա աշխատանքնե-
րի գլխավոր առանցքը կազմում ե՞ շրջանի և գլու-
ղի կանքի ուսումնասիրությունը, նրա թերու-
թյունները յերեան բերելը և իրենց ուժերին
համապատասխան (տարրական) բարեփոխություն-
ներ մտցնելու ծրագրերը:

Վորպես որինակ մշակում ենք «Գարնանալին
աշխատանքները և նրանց համար նախապատրաստ-
վելը» թեման:

Նախքան գարնանալին աշխատանքների պլա-
նավորման անցնելը անհրաժեշտ ե առաջին հեր-
թին ծանոթանալ նախկին տարիներում կատա-
րած փորձերին, լսել բարձր խմբի աշակերտ-
ների մեկ կամ յերկու զեկուցում, ծանոթանալ
նրանց աշխատանքների մասին յեղած արձանա-
գրություններին, վորոշումներին, որինակելի հրա-
հանգին, տեղեկանալ այն բոլորին, ինչ կատար-
վել ե իրենցից առաջ: Ուսումնասիրել զյուղն ի-
րենց անելիքների սահմաններում:

Ծանոթանալ շրջգործկոմին և գյուղիսորհրդին,

ազգոկայանին և այլ համապատասխան հիմնարկ-
ների, խոսել ու վերցնել իրենց ուժերին համա-
պատասխան հանձնարարություններ:

Այս բոլոր նյութերը և իրենց ուժերի հաշ-
վառումը կազմում են աշխատանքի պլան՝ գար-
նան անելիքների համար: Պահապատճենը տարվում
ե այնպես, վոր մանրամասն բաժանվում ե յեր-
կու մասի՝ դպրոցում և դպրոցից դուրս տարվող
աշխատանքներ:

Աշխատանքներն սկսվում են ուսուցչի զրու-
ցով: Պարզում են, թե գարնան աշխատանքներն
ինչ գեր ու նշանակություն ունեն զյուղացու-
մանեւսության համար, թվում են, թե նրանք գար-
նանն ինչ աշխատանքներ են տանում, վորից
հետո անցնում են իրենց անելիքներին և պար-
զում են, թե ինչ ունեն անելու և ինչ նախա-
պատրաստական աշխատանքներ պիտի տանեն:

«Գարնանալին աշխատանքների» թեմայի
մշակությունն սկսվում ե եքսկուրսիայով:

Գործնական (խմբով).—Եքսկուրսիա՝ գեղի
դաշտ, անտառ, գետափ՝ հողը գիտելու և հետա-
զոտելու, յեթե բացված շերտեր չկան, պետք ե
փոս փորել և գիտել շերտերը:

Տեսական (խմբում).—Հողի նշանակությունը,
կազմը, տեսակները, խոնավությունը, ոդը, ջեր-
մությունը, հողի ստորին շերտի կազմությունը

և նրա առանձնահատկությունները։ Հողի կոլուխուհի հատկությունները։

Զեսնարկ Քիմիա, ա. մաս Նիկ. Սարգսյան. յերես 58 - 67.

Փորձնական։—Հողի շերտերի ուսումնասիրությունը կատարել ողակների միջոցով, փորձերը նրանց մեջ բաժանելով։

1 ողակ պարզում ե հողի տեսակները

2 » վորոշում ե հումուսի չափը— փորձ № 93.

3 » » ավազի քանակը— փորձ № 96 և 97.

4 » » աղերի » » № 95.

5 » » կրաքարի »

6 » » ամբողջ ուսումնասիրությունից կազմում ե կոլեկցիա «Մեր հողի կազմությունը» վերնագրով։

Խմբում կատարվում ե փորձ հողի կոլուխուհութեամբների։

Բացի այդ, ողակներին հանձնարարվում ե հետազոտել գյուղի լավ, վատ և սիջակ տեսակի հողերը և դրանցից կոլեկցիա կազմել։

Յուրաքանչյուր աշակերտ հետազոտում ե իրանակառնության հողը, իրեն համար դիմումնակազմում։

Կատարվում ե բանջարանոցի տեղի ընտրություն, և ա. խմբի հողամասը բաժանվում ե ողակների մեջ։

Տեսական (խմբում).—Հողամասի հատակագի-

ծը վերցնել կոնսուրով, չափելով յերկարությունը։ Պարզել նաև թերզությունը։

Հատակագծի գծագրումը, յերեք կողմերով յեռանկյունի կազմելը, ծանոթություն պայմանական նշանների։

Ծանոթություն եկեղեցին։

Զեսնարկ «Զնական յերկաշափություն». Կեմպբել

Գործնական։—Յուրաքանչյուր ողակ եկեղեցի սպառությամբ հատակագծում ե իր հողամասը։ Վոչ բարդ կոնսուրով (կոնսուրի ներսը մագիստրաներ կախելով կամ կօնսուրը շրջանի մեջ ամփոփելով)։

Վոչ բարդ հողամասի կամ ուղեգծի (մարշրուտի) ուրվագծումը քայլաշափերով՝ պլանշեափ, կողմացուցի և յեսակող մասշտաբային քանոնի միջոցով։

Տեսական (խմբում).— Բանջարաբուծություն, բանջարանոցային կուլտուրաների նշանակությունն ու տեղը գյուղացու տնաեսության մեջ, ինչպես գյուղացու մնացի, նույնպես և անաստնինչպես կեր (կարտոֆիլ, կաղամբ, ճակնդեղ, պաշար, գետնաբինձոր, լոբի, սիսեռ և այլն)։

Զեսնարկ «Բուսաբանություն». Նիկ. Սարգսյան. յերես 268 - 281, 253 - 259.

Գործնական։—Հանձնարարվում ե ողակներին պարզել հայաստանում, իրենց դավառում,

շրջանում և գյուղում այդ մշակվող կուլտուրաների քանակը և կազմել դժբախամմա (լուրաքանչչուր ողակին մի կամ յերկու տեսակ բույս հանձնարարել):

Տեսական (խմբում).—Վերցրած բույսերի առանձնահատկությունները. գաղափար նրանց ընտանիքների մասին, այդ բույսերի կենսարանական առանձնահատկությունները և նրանց նշանակությունը իրենց տնտեսության և արդյունաբերության համար: Ինչպիսի պարարտացում են պահանջում վերցրած բույսերը:

Յուրաքանչյուր ողակի հանձնարարվում է մեկ կամ յերկու տեսակ բույս ցանել իր վերցրած հողամասում:

Ողակներն իրենց վերցրած բույսի մասին ավելի խորացրած են անցնում, կարգում են լրացոցիչ գրականություն (ուսուցչի մատնաշած) և զեկուցում խմբին:

Գործնական. — Յուրաքանչյուր ողակ իր վերցրած բույսի պահանջի համեմատ պարարտացնում է հողը, միայն մի մասը թողնում է առանց պարարտացնելու, փորպեսզի նրանց տարբերությունը կարողանան պարզ պատկերացնել:

Հանձնարարվում է ողակների անզամներին՝ փորբերի, չքափորների, կարմիր-բանակալավինների,

ալրի կանանց անաեսությունների հողը պարարտացնել:

Յուրաքանչյուր աշակերտ սովորեցնում է իր ծնողին, հարեամններին, բարեկամներին, թե ինչպես պետք է հողը պարարտացնել, և ոգնում է նրանց իր ցուցմունքներով:

Զեռնարկ. — «Յուրաքանություն». Նիկ. Սարգսյան,
յերես 138—141.

Տեսական (խմբում). — Քննության են առնում իրենց շրջանում և գյուղում մշակվող բույսերը, համեմատում են, թե վնասափ է համապատասխանում տվյալ բույսը տեղի հողագիտական պարզաններին, պարզում են, թե վնասն արդյունավետ է ցանվող բույսի մշակությունը և ինչ նպատակների համար է մշակվում (արդյունաբերության, մարդկանց և անսունների կերպի, շուկա արտահանելու):

Յեթե իրենց գյուղի հողագիտական պայմանների տեսակետից ավելի նպատակահարմար է մի այլ բույս մշակել, վոր չի ցանվում իրենց գյուղում, մշակվում է դպրոցի հողամասում և բացարփում գյուղացիներին: Կամ հանձնարարվում է աշակերտներին ցանել իրենց տնտեսություններում:

Գործնական (խմբում). — Ծանոթություն պարզ մեքենաներին՝ բան, գերանդի, փոցի, նիկ և ալին: Գործիքների մասերը բաժանել, այդ գործիք-

ներով աշխատել։ Համեմատել հին և նոր գործիք-ները միմյանց հետ և նշել նրանց առավելությունները։

Զեռնարկ—Педагогическая энциклопедия, том I, стр. 737—755.

Տեսական (խմբում). —Գլուղանտեսական պարզ մեքենաներ. (լծակի և ճախարակի փորձնական ուսումնասիրություն). պարզ մեքենաներով աշխատելիս շահվելն ըստ ուժի և փասփելն ըստ ճանապարհի։ Լծակի հավասարակշռման պայմանները, Գաղափար մեխանիկական աշխատանքների մասին և նրա չափումը կլոսդրամմետրներով։

Տեսական (ողակում). —Յուրաքանչյուր ողակի հանձնարարվում ե պարզել, թե իրենց գլուղում ինչ մեքենաներ և գործիքներ են գործածվում, նրանց քանակը, աշխատանքի արդյունքները (թե քանակը և թե գումարը), ինչ տնտեսություններ են գործածում այդ գործիքները (չքափոր, միջակ և ունեոր), Վորչափ են գործածվում նոր գործիքներ, փորտեղից են ձեռք բերել։ Ի՞նչ ողնություն են ցուց տալիս վարկավին ընկերությունները, փոկերը և այլ կազմակերպություններ—չքափոր գլուղացիներին և կոլեկտիվ արնետեսություններին նոր գործիքներ ձեռք բերելու խնդրում։

Ամեն մի ողակի հանձնարարվում է միան մի տեսակ գործիք։

Տեսական (խմբում). —Ծանոթություն սերմերին և նրանց տեսակներին։

Գործնական (խմբում). —Խոշոր և մանր սերմեր կշռել, ծլեցնել, փորձով ցուց տալ նրանց տարրերությունը։

Տեսական (խմբում). —Բացատրություն սերմերի տեսակների, սերմերի ծագումը, վոր գոտիներից են բերվում, աճեցողության առկուր, նրանց ախտահանումը։

Տարբեր սերմերի առանձնահատկությունը։ Սերմեր բուցնելու պայմանները։ Սերմեր թրչել, մաքրել և հետազոտել։ Ցանքող սերմեր։ Ցանքող սերմերի ծլման համար անհրաժեշտ ջերմությունը, լույսը և խոնավությունը։

Գործնական։ —Կազմել աղյուսակներ զանազան սերմերի պահանջած ջերմության, խորության և ցաներու ժամանակի։

Տեսական (խմբում). —Շարքացան, շաղացան, նրանց տարրերությունը և առավելությունները, Ցանած սերմերի խտությունը, խորությունը և ժամանակը։ Ի՞նչպես պետք է մաքրել սերմը վնասատու միջատներից և սունկերից։ Մի հեկտար հողի վրա շարքացանով և շաղացանով պահանջվելիք սերմի քանակը։

Գործնական.—Կազմել աղյուսակներ զանազան սերմերի պահանջած ջերմության, խորոշիքան և ցանքսի ժամանակի:

Տեսական յեվ գործնական (*ողակում*).—Ամեն մի ողակ իր վերցրած սերմի մասին նախ կարդում և ուսուցչի մատնանշած լրացուցիչ գրականությունը և ապա կատարում ամբողջ ուսումնամասիրությունը և արդյունքները զեկուցում խմբում:

Նույն ուսումնամասիրությունը աշակերտները կատարում են իրենց տնտեսություններում ցանվելիք սերմերի նկատմամբ:

Ամբողջ խմբով ողնում են զյուղում տարփող գարնանացանի կամպանիային, մասնակցում են սերմերը մաքրելուն, ուսումնամասիրելուն, ցանելուն և ապն:

Ցանելիս մի մասը շարքացանով են ցանում, իսկ մյուսը՝ շաղացանով։ Արձանագրել նրանց տարբերությունը, ցանած սերմերի խորությունը, ցաքանելու պայմանները, ինչ տիպի ցաքաններ են գործածվում, մի հեկտար հողամասի մշակության վրա պահանջվելիք կենդանի ուժի գործադրումը։

Տեսական (*խմբում*).—Լավ սերմերի նշանակությունը:

Գործնական (*ողակում*).—Ողակներն իրենց վրա յեն վերցնում ցանած բույսի սերմացուներ տնկելը:

ԳԱՐՆԱՆՑԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԴԱՇՏՈՒՄ

Տեսական (*խմբում*).—Արմատապառւղներ և խոտեր բուսցներու նշանակությունը։ Արմատապառւղների տնտեսական և արդյունաբերական նշանակությունը։

Գյուղական տնտեսություններում գործադրվող արմատապառւղների քանակը։

Խոտաբուլսերը. Նրանց տեսակները և մշակության չափը, խոտաբուլսերի նշանակությունը անամնապահության և կաթնատնտեսության զարգացման գործի համար։

Ի՞նչպիսի պարարտանյութեր են գործածվում. բնական և քիմիական պարարտանյութեր (գոմաղբ, կանաչ պարարտացում, ալրված և փոշիացած վոսկը, քուսպ, ֆոսֆատ, շակ, կոմպոստ և այլն):

Բացատրություն գարնանացանքսի և աշնանացանքսի մասին. Նրանց տարբերությունն ու նշանակությունը։ Հողը վարելու նշանակությունը։ Գարնանացանքսը, ցանքսի խնամքը, հանդիսաթողած վարելահողի մշակումը։

Աշնանավարի նշանակությունը բերքատվության համար։ Աշնանավարի և գարնանավարի բերքի քանակը։

Գործնական.՝ Ցուրաքանչյուր ողակ ցանե-

յու համար վերցնում ե մի տեսակ արմատապուղ, իսկ յեթե միենուլն տեսակն ե ցանվում, բաժանել ըստ ողակների քանակի և հանձնարարել նրանց՝ խնամել իրենց մասը:

Ողակը մշակում ե նույն բույսը պարարտացրած և վոչ պարարտացրած մարգերի վրա՝ տարբերությունը պարզ տեսնելու համար:

Տեսական (խմբում).—Բանջարանոցավին մոլախոտերը, նրանց կենսարանական առանձնահատկությունները և կյանքի պայմաններին հարմարվելը։ Գոյության կովի բացատրությունը մոլախոտերի և մշակովի բույսերի որինակներով։

Գործնական.—Մոլախոտերի դեմ կովելիս մի փոքրիկ մարգ թողնել առանց խնամքի՝ մոլախոտերի դերը շոշափելի դարձնելու համար։

Զրատար առուների կանոնավորումը։

Տեսական (խմբում).—Անձրևաճիճու, նրա կազմությունը և աշխատանքը հողի մեջ, նրա տպած ոգուտը հողի մշակման գործին։

Կուլտուրական բույսերի վնասատու միջատները՝ կաղամթի թիթեռ, զանազան միջատների թրթուրներ և այլն՝ նրանց կազմությունը, առանձնահատկությունները՝ շաղկապված նրանց ֆունկցիաների հետ, նրանց դեմ կովելու միջոցները։

Ուսումնասիրվող միջատների հարմարեցումն իրենց շրջապատին, գոյության կովին (միմիկրիա, պաշտպանողական գունաթափություն և այլն):

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՈԳՏՎԵԼ ՀԵՏՎՅՈՒ ԶԵՐԸ ԱՐԿԱՆԵՐԻՑ՝

1. Բակունց Ա.՝ Կարտոֆիլի մշակություն 9ինը 20 կ.
2. Թումանյան՝ Շարքացան և նրա նշանակությունը 15 »
3. Մելիք-Շահնազարյան՝ Կոտիկատը և կանեփը 20 »
4. , , , Տիգլանեփ 05 »
5. Ա. Աթանասյան՝ Գութան թե՛ արոր 05 »
6. Հ. Փելումյան՝ Խոսաբույները և նրանց մշակության յեղանակները 10 »

«Ազգային գրադարան




NL0222288

ՈՂԱԿԱՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՐՏ

| Ամսաթիվ | | Առաջադրություններ | | Առողջություն | | Աշխատանք | | Ա. Վ Դ Ա Ա Ծ Բ Ե Ր Ա | | Ս շ ա կ ա ծ հ ա ր ա մ ա ն ա լ ի շ ա բ ը | |
|-------------------|-------------------|-------------------|-------------------|-------------------|-------------------|-------------------|-------------------|----------------------|-------------------|---|-------------------|
| Առաջադրություններ | Առաջադրություններ | Առաջադրություններ | Առաջադրություններ |
| Գործիքներ | Գործիքներ | Գործիքներ | Գործիքներ |

Ծանոթ.



48.232



MESSENGER 10. 409.